Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
փետրվարի 9-ի N 174-Լ որոշման

# Ց Ա Ն Կ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Պատասխանատու մարմինը | Համակատարող մարմինը (մարմինները) | Կատարման ժամկետը | Ակնկալվող արդյունքը | Ակնկալվող ֆինանսական միջոցները և աղբյուրները | Վերստուգելի չափանիշը |
|---|---|---|---|---|---|---|---|
| **1. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ** | | | | | | | |
| **1.1. Մոր և մանկան առողջության պահպանում** | | | | | | | |
| 1. | «Վերարտադրողական առողջության բարելավման, պերինատալ կորուստների նվազեցման և առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման 2024-2026 թթ. ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում | Առողջապահության նախարարություն | - | 2024 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | Առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման գործող ծրագրի ընթացքը և արդյունավետությունը գնահատված են, դրա հիման վրա պերինատալ կորուստների նվազեցմանն ու վերարտադրողական առողջության բարելավմանն ուղղված նոր ծրագիրը մշակված է: | Ֆինանսավորում չի պահանջվում: | Կառավարության որոշման առկայություն |
| 2. | Հայաստանի Հանրապետությունում կեսարյան հատումների աճի միտման պատճառների հետազոտության իրականացում | Առողջապահության նախարարություն | ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ (համաձայնությամբ) | 2023 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | Հետազոտության արդյունքներն ամփոփված են, կեսարյան հատումների աճի միտման հիմնական պատճառները վերհանված են: | Միջազգային կազմակերպությունների կողմից նպատակային ֆինանսավորում | Իրականացված հետազոտություն |
| 3. | «Հայաստանի Հանրապետությունում կեսարյան հատումների աճի դադարեցմանն ու նվազեցմանն | Առողջապահության նախարարություն | - | 2023 թ. դեկտեմբերի | Հանրապետությունում կեսարյան հատումների աճի պատճառները վերլուծված են, | Ֆինանսավորում չի պահանջվում: | Առողջապահության նախարարի |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում | | | 1-ին տասնօրյակ | վերջիններիս ազդեցության նվազեցմանն ուղղված միջո-ցառումները՝ սահմանված: Միջոցառման իրականաց-ման արդյունքում հաստատ-ված կլինի կեսարյան հատումների աճի դադա-րեցմանն ու նվազեցմանն ուղղված համալիր ծրագիր: | | հրամանի առկայու-թյուն |
| 4. | Մարզային բժշկական կազմակեր-պություններում երեխաների ինտեն-սիվ թերապիայի ծառայությունների բուժանձնակազմի գիտելիքների և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում | Առողջապահության նախարարություն | ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (համաձայնու-թյամբ) | 2023-2024 թթ. | Հանրապետության բոլոր մարզերում երեխաներին ինտենսիվ բուժօգնություն մատուցող ծառայություն-ների գնահատում, ըստ անհրաժեշտության վերա-զինում, երեխաների ինտեն-սիվ թերապիայի ենթակա տարածված վիճակների ալգո-րիթմերի մշակում, տպագրում և բաշխում, մարզերի բժշկական կենտրոններում, մանկական ինտենսիվ թերապիայի թեմայով արտագնա ուսուցման կազմակերպում: 2023 թ. հաստատված և տպագրված 10 ալգորիթմ: 2024 թ. մարզի մասնագետների գիտելիքների բարելավում 50%-ով: Միջոցառման իրականացման արդյունքում կապահովվի մարզերում մինչև 1 տարեկան երեխաների մահացության նվազում 15 տոկոսով: | Միջազգային կազմակերպությունների կողմից նպատակային ֆինանսավորում<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | Մանկական և մինչև 5 տարեկան երեխաների մահացու-թյան ցուցանիշ, հիվանդա-նոցային մահաբերու-թյան, այդ թվում՝ մինչ շուրջօրյա, ցուցանիշ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5. | Հայաստանի Հանրապետությու-նում մանկական պալիատիվ արտահիվանդանոցային պիլո-տային ծառայության ստեղծում՝ Երևանի և մոտակա մարզերի շահառուների համար | Առողջապահության նախարարություն | | 2023 թ. | Մոբիլ բժշկական բրիգադի միջոցով պալիատիվ ծառայու-թյան տրամադրում կյանքի վերջին փուլում գտնվող և / կամ կյանքի որակն էապես սահմանափակող հիվանդու-թյուններ ունեցող երեխա-ներին՝ տնային պայման-ներում՝ էապես բարելավելով նրանց կյանքի որակը | ՀՀ պետական բյուջե<br><br>(Տարեկան 30 մլն դրամ) | Գործող մանկական արտահի-վանդանո-ցային պալիատիվ ծառայու-թյուն/թվի աճ |
| 6. | Մոր և մանկան ոլորտում մատուց-վող ծառայությունների, հղիների, երեխաների խնամքի, առավել տարածված հիվանդությունների և վիճակների վերաբերյալ տեղե-կատվական/խորհրդատվական ինտերնետային հարթակի ստեղ-ծում, գործարկում, պահպանում և պարբերաբար թարմացում | Առողջապահության նախարարություն | ՄԱԿ-ի զարգացման հիմնադրամ (համաձայնու-թյամբ)<br><br>Հայկական ակնաբուժության նախագիծ ԲՀ (համաձայնու-թյամբ) | 2023-2024 թթ. | Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում հասանելի ծառայությունների մասին իրազեկում, հղիների, երեխա-ների խնամքի և հաճախ հան-դիպող հիվանդությունների և վիճակների վերաբերյալ իրա-զեկում, ճիշտ ուղղորդում, ինչի արդյունքում նրանք կստանան բավարար գիտե-լիք՝ երեխայի վիճակը ճիշտ գնահատելու և մինչհիվան-դանոցային փուլում ճիշտ գործելակերպ կիրառելու վերաբերյալ:<br>Մայրերի/խնամողների գիտելիքների բարձրացման նպատակով կայքի պարբե-րաբար թարմացում: | Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում | Ստեղծված ինտերնե-տային հարթակ, կայքի դիտումների թիվ/թվի աճ |
| 7. | «Առողջության առաջնային պահ-պանման բժշկական կազմակեր-պություններում և հանրակրթա-կան ուսումնական հաստատու-թյուններում դպրոցահասակ երեխա-ների և դեռահասների բժշկական | Առողջապահության նախարարություն | - | 2023 թ. դեկտեմբերի 1-ին տաս-նօրյակ | Գործող ԱԱՊ համակարգում դեռահասային ծառայության ինտեգրման վերաբերյալ ներկայացված առաջարկ-ների հիման վրա դպրոցա- | Ֆինանսավորում չի պահանջվում: | Առողջապա-հության նախարարի հրամանի առկայություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | օգնության և սպասարկման կարգը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում | | | | հասակ երեխաների և դեռահասների սպասարկման կարգը մշակված է: Դեռահասային ծառայության ներդրման համար նախադրյալների ստեղծում | | |
| **1.2. ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ** | | | | | | | |
| 1. | «Ալկոհոլի չարաշահման, ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելմանն ուղղված իրազեկման ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում | Առողջապահության նախարարություն | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ մարզպետարաններ | 2024 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ | Ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման ռիսկերի նվազեցում և բնակչության շրջանում ծխախոտի օգտագործման նվազեցում | Ֆինանսավորում չի պահանջվում: | Առողջապահության նախարարի հրամանի առկայություն |
| 2. | Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի միջոցառումների շրջանակում սքրինինգային ծրագրերի իրականացում՝ մասնավորապես կրծքագեղձի, կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով: Շարունակել և ընդլայնել կանանց ընդգրկվածությունը արգանդի պարանոցի քաղցկեղի՝ ՊԱՊ-քսուքի հետազոտություններում | Առողջապահության նախարարություն | - | 2023-2026 թթ. | Առավել տարածված չարորակ նորագոյացությունների՝ կրծքագեղձի, կոլոռեկտալ և արգանդի պարանոցի քաղցկեղների վաղ հայտնաբերում, կանանց արգանդի պարանոցի քաղցկեղի՝ ՊԱՊ-քսուքի հետազոտություններում ընդգրկվածության ընդլայնում | Միջազգային կազմակերպությունների կողմից հատկացված միջոցներ<br><br>կրծքագեղձի սքրինինգային ծրագիր 2023-2024 թթ. համար շուրջ 48 մլն դրամ<br><br>ՀՀ պետական բյուջե<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | 50-69 տարեկան կանանց կրծքագեղձի, 50-75 տարեկան բնակչության կոլոռեկտալ քաղցկեղի սքրինինգային հետազոտություններում ընդգրկվածության ցուցանիշի բարելավում: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | 30-59 տարեկան կանանց արգանդի պարանոցի քաղցկեղի սքրինինգ-ային հետազո-տություն-ներում ընդգրկվա-ծության ցուցանիշի բարելավում |
| 3. | Առողջապահության նախարարի 2021 թվականի ապրիլի 7-ի թիվ 1126-Լ հրամանով հաստատված չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում, դեղի անվճար տրամադրում | Առողջապահության նախարարություն | | 2023-2024 թթ. | Միջոցառումների իրակա-նացման ավարտին չարորակ նորագոյացություններից մահացության ցուցանիշի նվազում 2,5%-ով, վաղ հայտնաբերման ցուցանիշի բարելավում՝ 5%-ով - 5 և 10 տարվա ապրելիության ցուցանիշների բարելավում՝ համապատասխանաբար 25%-ով և 10%- ով: 2023 թ.-ին չարորակ նորագոյացություններով պայմանավորված մահացություն (100 հազ. բնակչի հաշվով մահեր)՝ 178.4. 2024 թ.-ին չարորակ նորագոյացություններով | ՀՀ պետական բյուջե<br><br>ՀՀ պետական բյուջեի «1202. Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում» ծրագրի «11004. Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառում 2023 թ. 6,2 մլրդ դրամ Քիմիոթերապիայի ֆինանսավորման ավելացում՝ 1 կուրսը 300 000 դրամ հաշվարկով | Իրակա-նացված միջոցա-ռումներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | պայմանավորված մահացություն (100 հազ. բնակչի հաշվով մահեր)՝ 177.2. | | |
| 4. | Առողջապահության նախարարի 2019 թվականի օգոստոսի 26-ի թիվ 2341-Լ հրամանով հաստատված սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների իրականացում | Առողջապահության նախարարություն | - | 2023 թ. | Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ավարտին, արյան շրջանառության համակարգի հիվանդություններից մահացության ցուցանիշի նվազում 5%-ով | ՀՀ պետական բյուջե<br><br>«1202. Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում» ծրագրի «11005. Սրտի անհետաձգելի վիրահատություններ» (2023 թ. համար 1,65 մլրդ դրամ) | Իրականացված միջոցառումներ |
| 5. | Օրգանների և/կամ հյուսվածքների փոխպատվաստման ծառայությունների ընդլայնում | Առողջապահության նախարարություն | - | 2023-2026 թթ. | Փոխպատվաստումների ընդհանուր թվի ավելացում մինչև 200՝ 5 տարվա ընթացքում՝ տարեկան իրականացված մինչև 40 փոխպատվաստում | ՀՀ պետական բյուջե<br><br>«1207. Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» ծրագրի «11007. Փոխպատվաստման ծառայություններ» միջոցառմամբ 2023 թ. 203,0 մլն դրամ Լրացուցիչ միջոցները կնախատեսվեն տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում: | Ընդլայնված և ներդրված ծրագրի առկայություն |
| 6. | Սննդամթերքում հագեցած ճարպերի/տրանսճարպերի, ազատ շաքարների և աղի քանակների | Առողջապահության նախարարություն | Էկոնոմիկայի նախարարություն | 2024 թ. նոյեմբերի 1-ին | Սննդամթերքում հագեցած ճարպերի/տրանսճարպերի, ազատ շաքարների և աղի | Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով | Սննդամթերքում հագեցած |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | սահմանափակմանն ուղղված միջազգային փորձի ուսումնասիրություն և համապատասխան միջոցառումների իրականացման առաջարկությունների ներկայացում | | | տասնօրյակ | քանակների վերաբերյալ սպառողների իրազեկվածության բարձրացմանն ուղղված կարգավորումների սահմանում՝ ներառյալ սննդամթերքում վերոնշյալ բաղադրիչների առկայության և քանակների վերաբերյալ մակնշման կարգավորումը: | նախատեսված հատկացումների շրջանակում | ճարպերի/ տրանսճարպերի, աղի և ըմպելիքներում շաքարի առավելագույն քանակների սահմանմանն ուղղված ձևավորված առաջարկությունների առկայություն |
| **1.3. ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | | | | | |
| 1. | Նոր պատվաստումների ներդրում՝ ըստ անհրաժեշտության, պատվաստումների նկատմամբ պահանջարկի բարձրացում | Առողջապահության նախարարություն | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Ֆինանսների նախարարություն | 2023-2025 թթ. | Կառավարելի վարակիչ հիվանդություններով, այդ թվում՝ ջրծաղիկի և կորոնավիրուսային հիվանության հիվանդացության նվազեցում, դրանց հետևանքով մահվան դեպքերի կանխարգելում և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովում<br>18 տարեկան և բարձր տարիքի բնակչության կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստումներում ընդգրկվածությունը՝ 70% և ավելի: 2023 թվականին՝ | ՀՀ պետական բյուջե<br><br>«1003. Հանրային առողջության պահպանում» ծրագրի «11002. Իմունականխարգելման ազգային ծրագիր» միջոցառմամբ:<br>2023 թ. 3,7 մլրդ դրամ (տարեկան 3 մլրդ 700 մլն դրամ) | Պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների բարելավում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Պաշտպանու-թյան նախարարու-թյուն<br><br>Միջազգային կազմակերպու-թյուններ (համաձայնու-թյամբ) | | 70%, 2024 թվականին՝ 70%, 2025 թվականին՝ 70% և ավելի:<br>Կառավարելի վարակիչ հիվանդություններով, այդ թվում՝ ջրծաղիկի և կորո-նավիրուսային հիվանության հիվանդացության նվազեցում, դրանց հետևանքով մահվան դեպքերի կանխարգելում և վարակիչ հիվանդություն-ների նկատմամբ բնակչու-թյան անընկալության ապահովում: | | |
| 2. | ԱՆ «Հիվանդությունների վերա-հսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային մասնաճյուղերի արդիականացում | Առողջապահության նախարարություն | - | 2024 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ | «Հիվանդությունների վերա-հսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Արարատի և Արմավիրի մասնաճյուղերի վերակա-ռուցում, վերանորոգում և անհրաժեշտ բժշկական սար-քավորումներով հագեցում | Միջազգային կազմակերպու-թյուններ<br><br>Արմավիրի մասնաճյուղի համար՝ շուրջ 445 մլն դրամ<br><br>Արարատի մասնաճյուղի համար՝ շուրջ 435 մլն դրամ | Հակահա-մաճարա-կային միջոցա-ռումների իրակա-նացման ապահո-վում |
| **1.4. ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ** | | | | | | | |
| 1. | Առողջապահության նախարարի 2022 թվականի հուլիսի 8-ի թիվ 2948-Լ հրամանով հաստատված հոգեկան առողջության պահպան-ման և բարելավման միջոցա-ռումների ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացում | Առողջապահության նախարարություն | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածք- | 2023-2026 թթ. | Միջոցառումների իրակա-նացման ավարտին ակնկալվում է բարելավել բնակչության հոգեկան առողջությունը, պաշտպանել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց | ՀՀ պետական բյուջե<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | Հաստատ-ված միջո-ցառումների իրականաց-ման ապա-հովում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ների նախարարություն | | իրավունքները, զարգացնել հոգեկան առողջության պահպանման և բարելավման համակարգը, կանխարգելել բնակչության հոգեկան առող-ջության խնդիրների առա-ջացումը, ապահովել հոգեկան առողջության երկարատև խնդիրներ ունեցող անձանց հոգեսոցիալական վերա-կանգնումը և սոցիալական ներգրավվածությունը, ինչպես նաև զարգացնել կադրային ներուժը: | | |
| 2. | Արտահիվանդանոցային և հիվանդանոցային հոգեբուժական ծառայությունների արդիականացում | Առողջապահության նախարարություն | Քաղաքաշինու-թյան **կ**ոմիտե | 2025 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Հոգեբուժական ծառայու-թյունների արդիականացում | ՀՀ պետական բյուջե<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | Վերանորոգ-ված և հագեցած հոգեկան առողջու-թյան կենտրոններ և արտահի-վանդանո-ցային հոգեբու-ժական ծառայու-թյունների մատուցում |
| **1.5. ՏԱՐԵՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ** | | | | | | | |
| 1. | «Տարեցների խնամքի ծառայու-թյունների առանձնահատկու-թյունները» ձեռնարկ-ուղեցույցը հաստատելու մասին» | Առողջապահության նախարարություն | | 2024 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Տարեցների խնամքի ավելի որակյալ և արդյունավետ ծառա-յությունների մատուցում | Ֆինանսավորում չի պահանջվում: | Առողջապա-հության նախարարի հրամանի |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Առողջապահության նախարարի հրամանի ընդունում | | | | | | առկայու-թյուն |
| 2. | «Տարեցների խնամքի ծառայու-թյունների առանձնահատկու-թյունները» ձեռնարկ-ուղեցույցի հիման վրա բուժքույրերի համար վերապատրաստման դասընթացների իրականացում | Առողջապահության նախարարություն | | 2024-2025 թթ. | Տարեցների խնամքի ավելի որակյալ և արդյունավետ ծառայությունների մատուցում | ՀՀ պետական բյուջե<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | Առնվազն 500 վերապատ-րաստված բուժքույր |
| 3. | Դեմենցիայի կանխարգելման ազգային պլանի մշակում և ներդրում | Առողջապահության նախարարություն | | 2023-2026 թթ. | Տարեցների խնամքի ավելի որակյալ և արդյունավետ ծառայությունների մատուցում | ՀՀ պետական բյուջե<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | |
| **1.6. ԱՊԱՀՈՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ** | | | | | | | |
| 1. | «Հանրային առողջապահության մասին» օրենքի ընդունում | Առողջապահության նախարարություն | - | 2023 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Հանրային առողջության բարելավման օրենսդրական հիմքերի ամրագրում | Ֆինանսավորում չի պահանջվում: | Օրենքի նախագծի առկայու-թյուն |
| 2. | Շրջակա միջավայրի հետազո-տությունների և ազգաբնակչու-թյան հիվանդացության միջոցով ռիսկերի բացահայտում, կանխար-գելիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների փաթեթի մշակում | Առողջապահության նախարարություն | | 2023 թ. | Շրջակա միջավայրի տարբեր գործոնների ազդեցությունը բնակչության առողջության վրա | ՀՀ պետական բյուջե<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | Բնակչու-թյան առող-ջության վրա շրջակա միջավայրի տարբեր գործոնների անբարե-նպաստ ազդեցու-թյան հետ կապված առկա հիմնա-խնդիրների վերլուծու-թյուն, |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ռիսկերի գնահատում և առաջար-կությունների ներկայա-ցում՝ շահա-գրգիռ կա-ռույցներին: |
| 3. | Կլիմայի փոփոխության նկատ-մամբ զգայուն հիվանդությունների, այդ թվում՝ փոխանցողով պայմանավորված, ջրային և սննդային ծագման հիվանդու-թյունների, եղանակի, փոխանցող-ների, վերահսկման, կանխարգել-ման և արձագանքման համակար-գերի շարունակական հզորացում, այդ թվում՝ «Մեկ առողջություն» սկզբունքի ներդրմամբ | Առողջապահության նախարարություն | Շրջակա միջավայրի նախարարություն<br>Ներքին գործերի նախարարություն<br>Տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություն | 2025-2026 թթ. | Վերահսկման, կանխարգել-ման և արձագանքման համա-կարգերի կարողությունների հզորացում | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | Կատարված աշխա-տանքների վերաբերյալ տարեկան հաշվետվու-թյուն |
| 4. | Առողջության առաջնային պահ-պանման բժշկական օգնություն իրականացնող կազմակերպու-թյունների բուժաշխատողների համար՝ կլիմայի փոփոխության ազդեցությունների և ռիսկերի վերաբերյալ դասընթացների և ուսումնական ձեռնարկների մշակում և կլիմայի փոփոխությամբ պայմանավորված արյան շրջանառության, շնչառական համակարգի, մաշկի չարորակ նորագոյացությունների և վարակիչ հիվանդությունների կանխար-գելմանն ուղղված դասընթացների անցկացում՝ Սյունիքի, Արմավիրի, | Առողջապահության նախարարություն | Տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություն<br>ՀՀ մարզպետարաններ<br>Երևանի քաղաքապետա-րան (համաձայնու-թյամբ) | 2026 թ. նոյեմբերի 2-ին<br>տասնօրյակ | Կլիմայի փոփոխության ազդե-ցությունների և ռիսկերի վերա-բերյալ շարունակական մասնա-գիտական զարգացման (ՇՄԶ) դասընթացների և ուսումնական ձեռնարկների մշակում և դասընթացների իրականացում | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | Մշակված և անցկացված ՇՄԶ դասընթաց-ներ, թվով 50 վերապատ-րաստված բուժաշխա-տողների առկայու-թյուն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Արարատի գյուղական համայնքներում | | | | | | |
| 5. | Մշակել և ներդնել ջերմային ալիք-ների վաղ նախազգուշացման համակարգեր կլիմայի փոփոխու-թյան նկատմամբ առաջնահերթ զգայուն հիվանդությունների համար | Շրջակա միջավայրի նախարարություն | Արտակարգ իրավիճակների նախարարություն<br>Առողջապահության նախարարություն | 2026 թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ջերմային ալիքների վաղ նախազգուշացման համակար-գերի մշակում և ներդրում | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | Ջերմային ալիքների վաղ նախա-զգուշացման ներդրված համակար-գերի առկա-յություն |
| 6. | Կլիմայական ռիսկերի նկատմամբ բնակչության առողջության խոցելիու-թյան և հարմարվողականության գնահատում | Առողջապահության նախարարություն | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>Շրջակա միջավայրի նախարարություն | 2025-2026 թթ. | Կլիմայական ռիսկերի նկատ-մամբ բնակչության առողջու-թյան խոցելիության և հարմար-վողականության գնահատման նպատակով հետազոտության իրականացում | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | Կլիմայական ռիսկերի նկատմամբ բնակչության առողջու-թյան խոցելիու-թյան և հարմարվո-ղականու-թյան գնա-հատման վերլուծու-թյան առկա-յություն |
| 7. | ՀՀ բնակչության շրջանում և տեղական ինքնակառավարման մարմիններում կլիմայի փոփոխու-թյան վերաբերյալ գիտելիքների և կարողությունների բարելավում և պաշտպանական վարքագծի մասին իրազեկվածության բարձրացում | Առողջապահության նախարարություն | Տարածքային կառավարման և ենթակառուցվածք-ների նախարարու-թյուն<br>ՀՀ մարզպետարաններ | 2025 թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | Իրականացված իրազեկման աշխատանքներ | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | | | | |
| 8. | Գերատեսչությունների միջև կլիմայի փոփոխության վերաբերյալ տեղեկատվական հոսքերի կառավարման մեխանիզմների մշակում | Շրջակա միջավայրի նախարարություն | Արտակարգ իրավիճակների նախարարություն<br>Առողջապահության նախարարություն<br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2024 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Իրավական ակտերի վերանայում, անհրաժեշտության դեպքում նոր իրավական ակտերի մշակում, տեղեկատվության պարբերական տրամադրում | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | - |
| **2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ** | | | | | | | |
| **2.1. Առողջապահության համակարգի կառավարում** | | | | | | | |
| **2.1.1. Էլեկտրոնային առողջապահություն** | | | | | | | |
| 1. | Առողջապահության նախարարի 2020 թվականի փետրվարի 16-ի թիվ 456-Լ հրամանով հաստատված միջոցառումների իրականացում | Առողջապահության նախարարություն | - | 2024 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | Էլեկտրոնային առողջապահության համակարգը ներդրված է: | Ֆինանսավորում չի պահանջվում: | Թվայնացված ուղեգրերի, դեղատոմսերի, անաշխատունակության թերթիկի, քաղցկեղի և շաքարային դիաբետի ռեգիստրների առկա- |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | յություն, հան-րությանը տրամա-դրվող էլեկ-տրոնային տեղեկանք-ներ |
| 2. | Իրականացնել էլեկտրոնային առողջապահության համակարգի ինտեգրումը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարա-րության, Արդարադատության նախարարության, Պետական եկա-մուտների կոմիտեի, Ոստիկանության տեղեկատվական համակարգերի հետ | Առողջապահության նախարարություն | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>Արդարադատու-թյան նախարարություն<br><br>Պետական եկամուտների կոմիտե<br><br>Ոստիկանություն | 2024 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ինքնաշխատ եղանակով տվյալների ստացում տարբեր տեղեկատվական համակարգերից | ՀՀ պետական բյուջե<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | Էլեկտրոնա-յին առողջա-պահության համակարգի և Պետական եկամուտների կոմիտեի (Հարկա-տու-3), Աշխատան-քի և սոցիա-լական հարցերի նախարա-րության (ԲՍՓՀ) և Արդարա-դատության նախարա-րության (ՔԿԱԳ), Ոստիկա-նության տեղեկա-տվական համակար-գերի ինտեգրված լինելը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | «Էլեկտրոնային առողջապահական E-Health Card համակարգի օգտա-գործման խթանմանն ուղղված միջոցառումների ծրագիրը հաստա-տելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում | Առողջապահության նախարարություն | - | 2024 թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | Բնակչության կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգի օգտագործման խթանում | Ֆինանսավորում չի պահանջվում: | Առողջապա-հության նախարարի հրամանի առակայու-թյուն |
| **2.2. ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿ** | | | | | | | |
| 1. | Առողջապահության նախարարի 2022 թվականի ապրիլի 20-ի թիվ 1614-Լ հրամանով հաստատված Առողջապահական ծառայություն-ների որակի բարելավման ռազ-մավարության և դրանից բխող միջոցառումների ծրագրի ներդրում | Առողջապահության նախարարություն | - | 2023-2026 թթ. | Բժշկական օգնություն և սպասարկման արդյունավե-տության բարձրացում | Ֆինանսավորում չի պահանջվում: | Առողջապա-հության նախարարի հրամանի առկայու-թյուն |
| 2. | Կլինիկական ուղեցույցների, պացիենտի վարման գործելա-կարգերի և այլ փաստաթղթերի մշակում և ներդրում | Առողջապահության նախարարություն | - | 2023 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ<br>- 2025 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ (պարբե-րաբար) | Բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավում | Տվյալ միջոցառմանը հատկացված միջոցների հաշվին՝ 30.0 մլն դրամ | Առողջապա-հության նախարարի հրամաննե-րով հաս-տատված կլինիկական ուղեցույց-ների, պացիենտի վարման գործելա-կարգերի և այլ փաս-տաթղթերի առկայու-թյուն տարեկան 25 փաստա-թուղթ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **2.3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ** | | | | | | |
| 1. | Առողջության համապարփակ ապահովագրության հայեցակարգով նախատեսված առողջության համապարփակ ապահովագրության փուլային ներդրում | Առողջապահության նախարարություն | | 2023-2026 թթ. | Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մատչելիության և հասանելիության ապահովում | Ֆինանսավորում չի պահանջվում: | Առողջության համապարփակ ապահովագրության հայեցակարգը հաստատելու մասին կառավարության որոշման առկայություն |
| 2. | Առողջության համապարփակ ապահովագրության ներդրմանն ուղղված օրենսդրական փաթեթի մշակում | Առողջապահության նախարարություն | | 2023 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Առողջության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրման օրենսդրական հիմքերի սահմանում | Ֆինանսավորում չի պահանջվում: | Ազգային ժողովի կողմից ընդունված «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի և օրենքից բխող այլ օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենսդրական փաթեթի առկայություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի և դրա կառավարման խորհրդի ստեղծում, վերջինիս գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի փաթեթի մշակում, առողջության համապարփակ ապահովագրության ներդրումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի ընդունում | Առողջապահության նախարարություն | | 2023 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | | ՀՀ պետական բյուջե<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ<br><br>(շուրջ 1.5 մլրդ դրամ) | Պետական /հանրային հիմնադրամի և վերջինիս կառավարման խորհրդի ստեղծում, առողջության համապարփակ ապահովագրության ներդրում և օրենսդրական կարգավորում, ֆինանսական պաշտպանվածության բարձրացում, որի արդյունքում ֆինանսական պատճառներով բժշկի չդիմող տնային տնտեսությունների անդամների թվի նվազում մինչև 12%, |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Մասնավոր ծախսերի տեսակարար կշռի նվազում ԸԱԾ-ում մինչև 52%, Հիմնական ծառայությունների փաթեթից օգտվող բնակչության աճ մինչև 2,8 մլն |
| **2.3.1. Հիմնական բժշկական ծառայությունների փաթեթի ձևավորում** | | | | | | | |
| 1. | Հիմնական բժշկական ծառայությունների փաթեթի գնահատման գործիքի մշակում, հիմնական ծառայությունների փաթեթների գնահատում՝ ակտուարական հաշվարկների և կանխատեսումների միջոցով | Առողջապահության նախարարություն | - | 2023 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | | Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում 30"000"000 դրամ<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | ՀՀ առողջապահության նախարարի հրամանի առկայություն (գործիքի մշակման տեխնիկական առաջադրանք, դրա հիման վրա մշակված ծրագրային փաթեթ, գործիքի օգտագործման ուղեցույց, |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ակտուարա-կան հաշ-վարկների իրականաց-ման մեթոդա-բանություն, հաշվարկ-ների կա-տարման գործո-ղությունների նկարագիր) |
| **2.3.2. Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների կառավարում** | | | | | | | |
| 1. | Բժշկական օգնության և սպա-սարկման ծառայությունների գների հաշվարկման գործիքի մշակում և գործարկում | Առողջապահության նախարարություն | | 2023 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ | Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման գործիքի գործարկում՝ Առողջապահու-թյան նախարարի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի, մշակված ծրագրային փաթեթի, բժշկա-կան ծառայությունների հաշվարկված գների հիման վրա | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ<br><br>(32.000.000 դրամ) | Բժշկական օգնության և սպասարկ-ման ծառա-յությունների գների հաշվարկ-ման գործիքի առկայու-թյուն |
| 2. | «Բժշկական օգնության և սպա-սարկման ծառայությունների գների հաշվարկման գործիքի հիման վրա հիմնական ծառայություն-ների փաթեթում ընդգրկված ծառայությունների գները հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում | Առողջապահության նախարարություն | | 2023 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Առողջապահության նախա-րարության կողմից հաստատ-ված ծառայությունների գներ՝ հաշվարկված գների հաշվարկ-ման գործիքի միջոցով | Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում (32.000.000 դրամ) | Առողջապա-հության նախարարի հրամանի առկայու-թյուն |
| **2.4. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ** | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | «Շտապ բժշկական օգնության կենտրոնացված ծառայության ներդրման 2022-2025 թվական-ների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանով հաստատված ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացում | Առողջապահության նախարարություն | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>ՀՀ մարզպետարաններ | 2023-2025 թթ. | Շտապ օգնության ծառայու-թյունների մատուցման որակի և արդյունավետության բարձրացում | ՀՀ պետական բյուջե<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | Իրականաց-ված միջո-ցառումներ |
| 2. | Առողջապահության նախարարի 2022 թվականի հուլիսի 7-ի թիվ 2910-Լ հրամանով հաստատված ՀՀ առողջության առաջնային պահպանման օղակի բարեփոխում-ների միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացում | Առողջապահության նախարարություն | Տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություն<br><br>Երևանի քաղաքապետա-րան (համաձայնու-թյամբ)<br><br>ՀՀ մարզպետարան-ներ | 2023-2026 թթ. | Միջոցառումների իրականացման արդյունքում ԱԱՊ օղակի գործունեության արդյունավետության բարձրացման շնորհիվ հիվանդանոցային, ինչպես նաև շտապ և անհետաձգելի բուժօգնության դեպքերի թվի նվազում 10%-ով, ԱԱՊ այցելությունների կառուցվածքում աշխատան-քային տարիքի անձանց այցերի տեսակարար կշռի ավելացում 20%-ով, մեկ բնակչին բաժին ընկնող ԱԱՊ այցերի թվի բարելավում տարեկան մինչև 6 այց | ՀՀ պետական բյուջե<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | Իրականաց-ված միջո-ցառումներ |
| 3. | Հիվանդանոցային ծառայություն-ների կառուցվածքի մաստեր-պլանի և ծառայությունների մա-տուցման ինտեգրացված մոդելի մշակում և ներդրում՝ հիմնված հստակ ձևակերպված ցուցանիշ-ների վրա | Առողջապահության նախարարություն | - | 2024 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | Հիվանդանոցային ծառայու-թյունների արդյունավետու-թյան բարձրացում | ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ<br><br>(շուրջ 500 մլն դրամ) | Հիվանդա-նոցային ծա-ռայություն-ների կառուց-վածքի մաստեր-պլանի և ծառայու-թյունների մատուցման ինտեգրաց- |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ված մոդելի առկայու-թյուն |
| 4. | «Ազգային լաբորատոր համա-կարգի զարգացման ռազմավա-րության և դրանից բխող 2023-2026 թվականների միջոցառում-ների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում և ծրագրով նախատեսված միջոցառումների աշխատանքների իրականացում | Առողջապահության նախարարություն | - | 2023-2026 թթ. | Համակարգային և ծրագրային մոտեցմամբ խթանել ռեֆերենս լաբորատորիաների ինստի-տուտը, համաչափ հզորացնել կլինիկական լաբորատոր ախտորոշիչ ծառայություն-ների որակը և անվտանգության մակարդակը, դարձնել այն համաչափ հասանելի՝ ՀՀ ամբողջ տարածքում և ծախսարդյունավետ | Ֆինանսավորում չի պահանջվում: | 2023 թվա-կանին և 2026 թվա-կանին ՀՀ լաբորատոր համա-կարգի և առանձին լաբորատո-րիաների (թվով 60 լաբորա-տորիա) ԱՀԿ գործիքի միջոցով՝ գնահատ-ման արդյունք-ների համեմա-տություն և ծրագրի ազդեցու-թյան և արդյունա-վետության գնահատ-ման վերա-բերյալ հաշվետ-վություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5. | Երևան քաղաքի և ՀՀ մարզերի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների արդիականացում | Առողջապահության նախարարություն | Քաղաքաշինության կոմիտե | 2023-2026 թթ. | Բժշկական կազմակերպությունների կառուցում, վերանորոգում և անհրաժեշտ բժշկական սարքավորումներով հագեցում | ՀՀ պետական բյուջե<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ | Բժշկական ծառայությունների հասանելիության բարձրացում |
| 6. | «Հանրային առողջապահության անվտանգության ազգային գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը | Առողջապահության նախարարություն | - | 2023 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Հանրային առողջապահության անվտանգությանն ուղղված քայլերի իրականացում՝ օրենսդրական հիմքերի սահմանում | Ֆինանսավորում չի պահանջվում: | Կառավարության որոշման առկայություն՝ ուղղված միջազգային առողջապահական կանոնների կայուն ներդրմանը |
| **2.5. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ** | | | | | | | |
| **2.5.1. Բժշկական կրթության որակի բարելավում** | | | | | | | |
| 1. | Առողջապահության նախարարի 2022 թվականի փետրվարի 4 թիվ 470-Լ հրամանով հաստատված բուժքույրական գործի զարգացման ռազմավարության և դրանից բխող միջոցառումների ծրագրի ներդրում | Առողջապահության նախարարություն | - | 2023-2026 թթ. | Բուժքույրական գործի զարգացմանն ուղղված քայլերի ձեռնարկում | Ֆինանսավորում չի պահանջվում: | Առողջապահության նախարարի հրամանի առկայություն |
| 2. | «Մարզային բժշկական հաստատությունները կադրերով ապահովման, այդ թվում՝ բուժաշխատողների սոցիալական աջակցության և խրախուսման մեխանիզմների վերաբերյալ միջոցառումների ցանկը | Առողջապահության նախարարություն | - | 2023 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ | Մարզային բժշկական հաստատությունները կադրերով ապահովման և սոցիալական աջակցության խրախուսման մեխանիզմների ներդրման ապահովում | Ֆինանսավորում չի պահանջվում: | Առողջապահության նախարարի հրամանի առկայություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում | | | | | | |
| 3. | «Առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության հիմնական մասնագիտություն-ների և նեղ մասնագիտացումների ցանկերը սահմանելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում | Առողջապահության նախարարություն | - | 2023 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | Առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության, բժշկական և ոչ բժշկական մասնագիտություն-ների, ինչպես նաև նեղ մասնագիտությունների ցանկերի վերանայում, բժշկագիտության վերջին զարգացում-ներին համահունչ մասնագիտությունների ցանկերի առկայություն և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի պահանջի կատարում | Ֆինանսավորում չի պահանջվում: | Առողջապա-հության նախարարի հրամանի առկայու-թյուն |
| 4. | «Բուժաշխատողների մասնագիտա-կան բնութագրերը հաստատելու մասին» Առողջապահության նախա-րարի հրամանի ընդունում | Առողջապահության նախարարություն | - | 2024 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Բժշկագիտության վերջին զարգացումներին համահունչ մասնագիտական բնութագրերի առկայություն | Ֆինանսավորում չի պահանջվում: | Առողջապա-հության նախարարի հրամանի առկայու-թյուն |
| 5. | Կլինիկական ռեզիդենտուրայի ներդրման նպատակով պիլոտային ծրագրի իրականացում | Առողջապահության նախարարություն | - | Պիլոտային ծրագրի մեկնարկ՝ 2024 թ. սեպտեմ-բերի 1-ին տասնօրյակ | Կլինիկական ռեզիդենտուրայի (այդ թվում՝ հիվանդանոցային ռեզիդենտուրայի) ներդրմանն ուղղված միջոցառումների ցանկի վերաբերյալ ՀՀ կառա-վարության որոշման նախագծի մշակում | Ֆինանսավորում չի պահանջվում: | Կլինիկական ռեզիդեն-տուրայի ներդրմանն ուղղված միջոցա-ռումների ցանկի հաստատում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **2.5.2. Առողջապահության մարդկային ներուժի որակյալ համակարգի ձևավորում և կառավարում** | | | | | | | |
| 1. | Բուժաշխատողների լիցենզավորման համակարգի ներդրման նպատակով անհրաժեշտ իրավական ակտերի փաթեթի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Առողջապահության նախարարություն | - | 2024 թ. փետրվարի 1-ին տասնօրյակ | Բուժաշխատողների լիցենզավորման համակարգի ներդրման նպատակով անհրաժեշտ իրավական ակտերի մշակված փաթեթ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության որոշման առկայություն |
| 2. | Բուժաշխատողների ռեգիստրի գործարկում և պետական մարմինների կողմից վարվող տվյալների բազաներին ինտեգրում | Առողջապահության նախարարություն | | 2023 թ. հունիսի 1-ին տասնօրյակ | Մշտապես թարմացվող ավագ և բուժաշխատողների ռեգիստրի ներդրում և վարում, Էլեկտրոնային առողջապահության համակարգին ինտեգրված բուժաշխատողների, զբաղվածության և պահանջարկի, ռեզերվային ռեսուրսների էլեկտրոնային կառավարում | Միջազգային կազմակերպությունների կողմից հատկացված միջոցներ<br><br>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ<br><br>(շուրջ 290 մլն դրամ) | Բուժաշխատողների գործող ռեգիստրի առկայություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



09.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ